ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ քննարկում /1-ին լսում/ :

Վեղի համայնք. Դաշտաքար բնակավայր: 13.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 7-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Դաշտաքար, Կենտրոնական 22/ տեղի ունեցավ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1» ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում ավազի և կոպճազլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման, ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Դաշտաքար բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Ղազարյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության տնօրեն՝ Պետրոս Կարագոզյանը և Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը:

Հանրային քննարկումը /1-ին լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում ավազի և կոպճազլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման, ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեղի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեղու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին

հանրային քննարկումն է /1-ին լսում/: Վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, վերջինս ներկայացրեց ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման, ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերող հարցեր:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Որքան տարածք է հայցվում Ձեր կողմից.
2. Դաշտաքար բնակավայրի դպրոցը, մանկապարտեզ գտնվում են մոտակայքում, ինչ մեխանիզմ էք կիրառելու փլուզումները կանխելու, ինչպես նաև աղմուկը մեղմացնելու և փոշեզանգվածը նստացնելուն:
3. Փոշեզանգվածի կառավարման ինչ մեխանիզմ եք կիրառելու և լինելու է արդյոք ջրցան մեքենա, թե ոչ.

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ ընկերության կողմից հայցվում է 8.0 հա. հողատարածք, նախատեսվում է բնակավայրի մոտակայքում ափապաշտպան պատնեշ կառուցել, իսկ հայցվող տարածքը բավականին հեռու է և դպրոցից և մանկապարտեզից:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1.Գետից ինչ հեռավորության վրա է լինելու հանքավայրը

2.Արդյունահանվող հանքանյութի շերտը ինչ խորության վրա է գտնվում:

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ հանքանյութը գետի հունից 32 մետր հեռավորության վրա է գտնվելու, իսկ պաշարները մինչև 5-ը մետր խորության վրա են գտնվում:

Հաջորդիվ Դաշտաքար բնակավայրի բնակիչ՝ Արմինե Մանուկյանը անհանգստություններ հայտնեց հետևյալ հարցերի շուրջ.

1.Արդյունահանման պրոցեսում փոշի լինելու է արդյոք, նկատի ունենալով դպրոցի մոտ լինելու հանգամանքը.

2.Աղտոտվածություն արդյոք չի սպառնում ցանքատարածքներին.

3.Ժողովրդի կարծիքը հաշվի առնվելու է արդյոք թե ոչ, եթե արդյունահանումը ուղեկցվի փոշեզանգվածի առկայությամբ;

4.Բնակավայրը ինչ շահ կունենա հանքավայրի գործարկումից:

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ արդյունահանման պրոցեսում փոշի չի գոյանալու, քանի որ տեղանքը խոնավ է: Քանի որ փոշեզանգված չի գոյանալու, ուստի ցանքատարածքներին չեն

աղտոտվելու: Իսկ ինչ վերաբերվում է ժողովրդի կարծիքին և բնակավայրի շահին, դա փաստվելու է համայնքի և Ընկերության միջև կնքվելիք հուշագրով:

Հաջորդիվ Դաշտաքար բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Ղազարյանը հարց ուղղեց Ընկերությանը.

1.Արդյոք հանքավայրը չի խանգարի անասնապահությամբ զբաղվող գյուղացիներին, կենդանիներին գետի հունով արոտավայր տեղափոխելուն.

2.Հաջորդ լսմանը ակնկալում ենք կներկայացվի և կգնահատվի ռիսկերը.

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ կիրականացվի երկրաբանական ուսումնասիրություն և հաշվի կառնվի բնակչության մտահոգությունը: Հաջորդ լսմանը կներկայացվի նաև ռիսկերը:

Հաջորդիվ Դաշտաքար բնակավայրի բնակիչ՝ Արմինե Մանուկյանը հետևյալ հարցը ուղղեց Ընկերությանը. Ինչ ներդրում կանեք գյուղում.

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ՝ Զարուհի Զուտնաչյանը հայտնելով, որ Ընկերությունը պատրաստ է համայնքի հետ քննարկելու սոցիալ-տնտեսական ներդրումները, իսկ ներդրումների ուղղությունները կորոշի համայնքը :

Նախագահողը հարց ուղղեց արդյոք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ՄԱՐ ԳՐՈՒՊ 1»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Գ. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

գ. Դաշտաքար **07.08.2025թ.**

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.			
12.			
13.			
14.			
15.			
16.			
17.			
18.			
19.			
20.			
21.			